

ՆԱԽԱԳԱՅ ԱՍՏՏ ՊԱՂԵՍԻՆԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԸՆԴՈՒՆԵՅ

Երկուշաբթի, 16 Մայիս 2022-ին, Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատ ընդունեց Երոպայի եւ Սփիւռքի մէջ պաղեստինեան համայնքի միութեան ընդհանուր քարտուղարուեան անդամները, որոնք իրենց 5-րդ խորհրդաժողովը գումարեցին Դամասկոսի մէջ:



Նախագահ Ասատ ողջունեց պատուիրակութեան անդամները եւ իր ողջոյնը ուղղեց խորհրդաժողովի մասնակիցներուն: Ան Պաղեստինեան Դատին հանդէպ Սուրիոյ մօտեցումը ամրակուծ եւ անկեղծ բնութագրեց՝ Պաղեստինեան Դատին արդար լուծումը Սուրիոյ յաղթանակը եւս համարելով:

Նախագահ Ասատ շեշտեց, որ Պաղեստինեան Դատը ճանաչելի դարձաւ միջազգային հարթակներու վրայ՝ շնորհիւ Պաղեստինի եւ սփիւռքի պաղեստինցի դիմադրողներուն եւ նոր սերունդին, որ կը գիտակցի իր դատին կարեւորութեան եւ կառչած կը մնայ անոր:

Իրենց կարգին, պատուիրակութեան անդամները շեշտեցին, որ խորհրդաժողովը յաջողութեամբ պսակուեցաւ շնորհիւ Սուրիոյ Պաղեստինեան Դատին տրամադրած անսահման աջակցութեան: Անոնք անելուցին, որ այս տարի Սուրիա խորհրդաժողովի անդամները ընդունելով եւ Սուրիոյ մէջ պաղեստինցիներուն քաղաքացիական իրաւունքները յարգելով կրկին հաստատեց իր հաւատարմութիւնն ու զօրակցութիւնը Պաղեստինի ժողովուրդին:

ՆԱԽԱԳԱՅ ԱՍՏՏ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՏԱՐԱՆԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՅԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐ ՄԸ ԱՏՈՐԱԳՐԵՅ

Երեքշաբթի, 17 Մայիս 2022-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատ հրապարակեց 2022-ի «127» թուակիր հրամանագիրը, որուն համաձայն փաստաբան Մուհամմետ Ճիհատ Լահիամ Սուրիոյ սահմանադրական բարձրագոյն դատարանի նախագահ կը նշանակուի: Զրամանագիրին համաձայն, դատարանի 6 այլ դատաւորներ եւս նոր պաշտօնի կը կոչուին եւ Սահմանադրական Դատարանի կազմին մէջ 4 յաւելեալ դատաւորներ կը նշանակուին:



ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼԵԱՆ. «ԵՐԿԻՐԸ ԱՅՍ ՎԻՃԱԿԵՆ ԴՈՒՐՍ ԲԵՐԵԼՈՒԵ ԴՐԱԳԻՐԸ ԿԱՅ Ե՛ ԴՆՈՒՄԲԸ»



15 Մայիսին, ԶՅԴ Զայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ, Ազգային ժողովի փոխնախագահ Իշխան Սաղաթելեան Ֆրանսայի հրապարակին վրայ տուաւ մամլոյ ասուլիս մը, որուն ընթացքին անդրադարձաւ «Դիմադրութեան» շարժման հանրահաւաքին եւ յառաջիկայ ծրագիրներուն:

Շար. 123 >

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԿՆԵՅԱԻ ԵԳԻՊՏՈՍ ՄԱՍՆԱԿՅԵԼՈՒ ՄԻՋԻՆ ԱՐԵԿԵԼԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՀԱՄԱԺՈՂՎԻՆ

«Անթիլիաս»._ Այս առաւօտ՝ Երկուշաբթի, 16 Մայիս 2022-ին, ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Զայրապետը մեկնեցաւ Գահիրէ (Եգիպտոս), ընդամաքելով ղպտի եկեղեցւոյ հոգեւոր պետ Թաուատրոս Պատրիարքին եւ Միջին Արեւելքի եկեղեցիներու Խորհուրդի (ՄԱԵԿ) ընդհանուր քարտուղարի հրաւերին, իբրեւ պատուոյ հիւր մասնակցելու եւ իր խօսքը ուղղելու Խորհուրդի համաժողովին:



Զորս տարին անգամ մը գումարուող ՄԱԵԿի ներկայ համաժողովին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կը մասնակցի հինգ անձերէ բաղկացած պատուիրակութեամբ.

- Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեան (Թեհրանի հայոց թեմի առաջնորդ)
- Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեան (Լիբանանի հայոց թեմի առաջնորդ)
- Գերշ. Տ. Մասիս Եպս. Չօպուեան (Բերիոյ հայոց թեմի առաջնորդ)
- Զոգշ. Տ. Սարգիս Արք. Աբրահամեան (գաւազանակիր)
- Դոկտ. Ժան Սալմանեան (ՄԵՆ Ժողէֆ համալսարանի դասախօս)

Համաժողովին պիտի մասնակցին Միջին Արեւելքի բոլոր եկեղեցիները՝ իրենց պատուիրակութիւններով: Վեհափառ Զայրապետը, իր պատուիրակութեամբ, Մայրավանք պիտի վերադառնայ Ուրբաթ, 20 Մայիսին:

ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԵՍՓՈՒՄԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԶՅԴ-Ի ՍՈՍՏԱԴՐԱՄ ԵՐԵՔ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ ԸՆՏՐՈՒԵՅԱՆ

«Ազդակ».- Լիբանանի երեսփոխանական ընտրութիւններէն օր մը ետք՝ 16 Մայիսին, կարելի եղաւ յստակացնել արդիւնքները, որոնք հիման վրայ յաջողութիւն արձանագրեցին եւ ընտրուեցան Զայ Զեդափոխական Դաշնակցութեան կողմէ առաջադրուած թեկնածուներ Յակոբ Բագրատունի (ԶՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ)՝ Մեթն, Յակոբ Թերզեան՝ Պէյրութ Ա., ճորճ Պուլիքեան՝ Չախլէ:

Արդարեւ, Լիբանանի մէջ որդեգրուած ընտրական «ընկաղ» օրէնքին հետեւանքով երեկ կէսօրէ ետք շրջանառութեան մէջ դրուեցան լուրեր, թէ Լեռնալիբանանի Բ. ընտրաշրջանին՝ Մեթնի մէջ յաղթանակ արձանագրած չորս ընտրացանկերէն՝ ԶՅ Դաշնակցութեան եւ Միշէլ Մըրիի «Միասին գօրաւոր» ընտրացանկէն, Ազգային ազատ հոսանք, Փաղանգաւոր եւ Լիբանանեան ուժեր կուսակցութիւններուն ընտրացանկերէն բացի, կայ հինգերորդ ընտրացանկ մը՝ «Նահուա Տաուլա»-ն, որ կրնայ անցողիկ շեմը ապահովել:



Մինչ այդ, օր մը առաջ՝ առաւօտեան կանուխ ժամերուն, յստակ դարձած էր, որ ութ երեսփոխաններ ընդգրկող Մեթնի ընտրաշրջանին մէջ ընտրուած են ԶՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի (հայ առաքելական), Միշէլ Մըր եւ Էլիաս Պու Սաապ (յոյն ուղղափառ), Մըլիհմ Ռիաշի (յոյն կաթողիկէ), Սամի Ժեմալէ, Էլիաս Յանքաշ, Իպրահիմ Զանաան եւ Ռազի Զաժ (մարոնի):

Զեւեւաբար, «Նահուա Տաուլա» ընտրացանկին անցողիկ շեմը ապահովելու պարագային, անոր մարոնի թեկնածուն՝ Ժառ Ղոսընը կրնար երեսփոխան ընտրուիլ՝ մարոնի աթոռը գբաղեցնելու համար:

Ընտրական օրէնքին հիման վրայ ճշդուած այս քայլը պիտի նշանակէր՝ Լիբանանեան ուժեր կուսակցութեան ընտրուած երեսփոխան Ռազի Զաժի ձախողութիւնը, եւ ինքնաբերաբար Լիբանանեան ուժերուն պիտի ընծայէր երկրորդ երեսփոխան մը ունենալու կարելիութիւնը: Երկրորդ երեսփոխանը այս պարագային պիտի ըլլար Լիբանանեան ուժեր կուսակցութեան առաջադրած հայ թեկնածուն, ինչ որ պիտի նշանակէր Յ. Բագրատունիի ձախողութիւնը:

Լիբանանահայութիւնը սպասողական վիճակի մատնած այս կացութիւնը տեւեց շուրջ ութ ժամ, որոնք ընթացքին Ժոնէյտէի Արդարութեան պալատին մէջ դարձեալ քուէահամար կատարուեցաւ կարգ մը քուէատուփերու, որոնք ընդգրկեցին Սին Էլ Ֆիլի, Պաուշիի եւ Պիսքալթայի քուէատուփերը:

Տուեալ ընտրաշրջանի խնդրոյ առարկայ քաղաքական ուժերը իրենց իրաւաբաններով եւ վստահուած անձերով ներկայութիւն դարձան Ժոնէյտէի Արդարութեան պալատին մէջ, եւ յանկարծ երեկոյեան ժամը 7:50-ին յայտարարուեցաւ Ղոսընի յաղթանակը, որ թէեւ իրարանցումի մատնեց լիբանանահայ գաղութի գաւազանները, սակայն իր իսկութեան մէջ անպաշտօն էր:

Խմբագրական

ԱԶԳԻ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ «ՎԵՐՔ»-ՈՎ ԿՈՏՏԱՅՈՂ ԲԻՐԵՂ ՀՈԳԻՆԵՐԸ ՀԱՍԿՆԱԼ Է ՊԵՏՔ

ՀՀ Սփիւռքի գործերով յատուկ յանձնակատարին Սուրիա այցելութիւնը առիթ կրնար ըլլալ լաւապէս ճանչնալու ազգի ու հայրենիքի առօրեայով տագնապող հալէպահայ երիտասարդութիւնն ու անոր անշարժ ընդվզումը: Այդ ընդվզումը ոչ բեմագրուած էր, ոչ ալ հայրենի պետութեան դէմ քայլեր առնելու տրամադրութենէ մը սնանած:

Երիտասարդութիւնը մտահոգ է ու ամէն առիթ պիտի օգտագործէ իր մտահոգութիւնը ի՛ր ձեռով ու ոճով յայտնելու: Անոր մտահոգութիւնը փարատել է պէտք իր իսկ հայրենիքի պետական այրերու պատասխաններով, քայլերով: Պարզ ու բնական է ընդվզումը անոր՝ Արցախի կորուստին, Հայաստանին սպառնացող վտանգներուն եւ յատկապէս միջինարեւելեան գաղութներուն ապրած տագնապալի փորձառութեան լոյսին տակ: Անոր ընդվզումը պատասխանի կը կարօտի, ոչ թէ կշտամբանքի:

Տեղեկատուական բաց համակարգի դարու մէջ կ'ապրինք, ուր ամէն իրողութիւն, քաղաքական թէ ժողովրդային ամէն շարժում յստակ կը պարզուի երիտասարդութեան դիմաց: Անոնք տեսնելով, դատելով կ'արձագանգեն, հակուրութեամբ չեն առաջնորդուիր ամէն ըսուած կով տալու, իրենց տեսածն ու ապրածը կը վերլուծեն ու ըստայնմ կը կողմորոշուին:

Ազգի ու հայրենիքի յառաջընթացով տագնապող բիւրեղ հոգիները իրաւունք ունին պահանջելու ե՛ւ իշխանութենէն ե՛ւ կուսակցութիւններէն ազգին շահերը պաշտպանել, ազգին միասնականութիւնը, հայրենիքին սահմանները վտանգուած տեսնելու իրենց մտահոգութիւնը փարատող հարցումներուն պատասխանել ու համապատասխան քայլեր առնել:

Պատասխանել է պէտք ուրեմն պարզ ու մեկին, առանց անոնց տագնապը կապելու քաղաքական բարդ հաշիւներու հետ:

Ինչո՞ւ տագնապող երիտասարդ հոգիներուն մէջ հայրենի պետութեան դաւաճաններ կ'որոնէք, ինչո՞ւ ժողովրդավարութեան հաւատացող, ապահով հայրենիքի համար պայքարող ազատատենչ հոգիներուն մէջ «թալանչի»-ներ կ'որոնէք: Ինչո՞ւ խաղաղ ցուցարարներ կոպտօրէն կը ձերբակալէք ժողովրդավար երկրի մը մէջ: Ի՞նչ համաճարակ է այս, որմով կը վարակուին ու կը վարակեն մեր ազգին զաւակները: Ինչպէ՞ս պիտի բուժուինք ազգովին մեր ներքին ամբողջութիւնը բզքտող այս համաճարակէն:

Ականջ տուէ՛ք երիտասարդութեան պոռթկումին, Հայրենիքի մէջ թէ Սփիւռքի, շօշափեցէ՛ք անոր ազգային զարկերակը՝ զինք կշտամբելու, խաղաղ ցոյցերու ընթացքին ձերբակալելու եւ քաղաքական հաշիւներու թիրախ դարձնելու փոխարէն:

«Գ.»

-Երեքշաբթի, 17 Մայիս 2022-ին, Սուրիոյ Նախագահութեան պաշտօնական կայքը հաղորդեց, որ Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատ ընդունեց Մորիթանիական խորհրդարանական պատուիրակութիւն մը, Նախագահութեամբ Մորիթանիական-սուրիական Բարեկամութեան Յանձնախումբի Նախագահ Մուսթաֆա Սուհայպի:



Հանդիպումին ընթացքին կողմերը խորհրդակցեցան արաբական մակարդակով արձանագրուած վերջին զարգացումներուն շուրջ, յատկապէս տարածաշրջանին խաղաղութեան պահպանման գծով ժողովուրդներուն դերակատարութեան ակնարկելով:

Նախագահ Ասատ դիտել տուաւ, որ տարածաշրջանին դէմ մղուած պատերազմը գլխաւորաբար գաղափարախօսական է, այն ինչ որ ակելի վտանգաւոր կը նկատուի քան զինուորական պատերազմը:

Նախագահ Ասատ շեշտեց նման խորհրդարանական եւ ժողովրդային պատուիրակութիւններու փոխայցելութեան կարեւորութիւնը, որովհետեւ անոնք դրական անդադար կ'ունենան երկու երկիրներուն վրայ:

Իրենց կարգին, պատուիրակութեան անդամները բարձր գնահատեցին Սուրիոյ կեցուածքը արաբական հարցերուն նկատմամբ: Անոնք շեշտեցին, որ Մորիթանիական պիտի շարունակէ աջակցիլ Սուրիոյ ժողովուրդին՝ ահաբեկչութեան դէմ իր պատերազմին մէջ:

-Զորեքշաբթի, 18 Մայիս 2022-ին, Սուրիոյ Կրթութեան Նախարարութեան քննութիւններու բաժնի տնօրէն Իւնես Ֆաթի յայտնեց, որ Սուրիոյ մէջ 575. 413 աշակերտ-աշակերտուհի կը պատրաստուին միջնակարգի եւ երկրորդականի պետական քննութիւնները յանձնելու: Անոնք պիտի բաժնուին 5027 կեդրոններու մէջ:

Միջնակարգի «Պրովէ» պետական քննութիւններ պիտի յանձնեն 317. 275 աշակերտ-աշակերտուհի, իսկ երկրորդականի «պաքալորիա»՝ 219. 484, գրական բաժին, 140. 498 գիտական բաժին:



Ֆաթի յայտնեց, որ Նախարարութիւնը ամբողջացուցած է բոլոր Նախապատրաստական աշխատանքները, որպէսզի քննութեանը ընթացքը հեզասահ ընթանայ եւ աշակերտները դրական մթնոլորտի մէջ յանձնեն քննութիւնները:

-Երեքշաբթի, 17 Մայիս 2022-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Հասիչէի «Եփրատ» համալսարանէն ներս, 2021-2022 տարեշրջանի առաջին կիսամեայի քննութիւնները, 3 ամիս յետաձգուելէ ետք, կրկին ընթացք առած են:

Սուրիոյ Բարձրագոյն Կրթութեան Նախարարութիւնը յետաձգած էր Հասիչէի «Եփրատ» Համալսարանի ուսանողներուն քննութիւնները ակելի քան երեք ամիս, որովհետեւ քրտական ԶԱՍՏ-ի զինեալներն ու ԱՄՆ-ի պատերազմական օդանաւերը Եփրատ համալսարանի Տիւտետութեան, Քաղաքային Երկրաչափութեան եւ համալսարանին ենթակայ այլ կառոյցներ հրթիռակոծած ու քանդած էին, այն պատրուակով, որ «Սանաուիէ Սիւնաաիէ» բանտէն փախուստ տուած ՏԱՀԵԸ-ի բանտարկեալները այնտեղ ապաստանիլ փորձած են:



-Երկուշաբթի, 16 Մայիս 2022-ին, Դամասկոսի Արուարձանի ոստիկանատունը ՍԱՆԱ-ին հաղորդեց, որ ՏԵՐ Խապիէ գիւղին մէջ, ինքնաշարժի մը տակ ահաբեկիչներու լարած ական մը պայթած է, միեւնոյն ժամանակ յարակից շրջանի մը մէկ այլ ական մըն ալ պայթած է: Չոհուած է 3 քաղաքացի, արձանագրուած են նիւթական վնասներ:



Լուրեր Հայաշխարհին

ԻՃԽԱՆ ՍԱՂԱԹԵԼԵԱՆ. «ԵՐԿԻՐԸ ԱՅՍ...

Սկիզբ՝ 1

Այս յայտնեց, որ 25 Ապրիլին ի վեր սկսած է իրենց շարժումը, իսկ 1 Մայիսին ամենօրեայ դրութեամբ կը գիշերը հրապարակին վրայ, կը կատարեն անհնազանդութեան շարժումներ, իրազեկման երթեր՝ իբրև պայքար սուտի, ազգային խայտառակութեան, յանձնուողականութեան եւ երկիրը նոր գիշումներու տանելու դէմ:

Ամփոփելով կատարուած աշխատանքը եւ խօսելով յառաջիկայ ծրագիրներուն մասին՝ ան ըսաւ.

«Ապրիլի 25-ից իջել ենք փողոց այս իշխանութիւններին հեռացելու նպատակով, իսկ սկսած Մայիսի 1-ից ամենօրեայ դրութեամբ անհնազանդութեան գործողութիւններ, հաւաքներ, հանրահաւաքներ, երթեր ենք իրականացնում, շրջափակում տարբեր պետական հիմնարկներ եւ շէնքեր:



«Մենք Մայիսի 1-ից գիշերում ենք այս հրապարակում. սա արժանապատիւ քաղաքացիների պայքար է, պայքար է ընդդէմ սուտի, պայքար ընդդէմ ազգային խայտառակութեան, պայքար ընդդէմ յանձնուողականութեան եւ երկիրը նոր գիշումների տանելու: Մենք խոստացել ենք ինքներս մեզ, որ գնալու ենք մինչեւ վերջ եւ այս պայքարը աւարտելու ենք յաղթանակով:

«Սիրելի՛ հայրենակիցներ, նախ թոյլ տուէ՛ք որոշ գնահատումներ անել ստեղծուած իրավիճակի հետ կապուած:

«Ժողովուրդ ջան, ինձ ճանաչում էք, ճանաչում էք նաեւ այն կուսակցութեանը, որը ներկայացնում եմ ես: Ինձ համար դիւրին չէր լինելով 132 տարուայ անադոյթներ եւ կենսագրութիւն ունեցող կուսակցութեան Հայաստանի կառոյցի ներկայացուցիչ յայտարարել, որ մի կողմ ենք դնում կուսակցական պատկանելութիւնը եւ բոլորս համախմբուած մէկ գաղափարի շուրջ: Ի պատիւ Դաշնակցութեան՝ մենք դա արեցինք, դա արեցին նաեւ պայքարին միացած բոլոր քաղաքական ուժերը: Եւ ահա մենք այստեղ ենք՝ համախմբուած մէկ գաղափարի շուրջ: Դրանով մենք յստակ ուղերձ յղեցինք, որ սա պայքար չէ իշխանութեան համար, սա պայքար է յանուն երկրի, երկրի վիճակը օրհասական է, սա ամենեւին նախընտրական պայքար չէ եւ այդ հարցը այսօր լուծուած է:

«Ես եւ իմ ընկերները պայքարի առաջին օրը յայտարարել ենք, գնալու ենք մինչեւ վերջ, այս պայքարի յաջողութեան համար դրել ենք ամէն ինչ, ես պատրաստ եմ ցանկացած զոհողութեան, գնալու եմ առջեւից եւ առաջինը հարուածելու եմ, առաջին հարուածը իմ վրայ եմ վերցնելու, ամէն ինչ անելու ենք այս պայքարի յաջողութեան համար: Մենք անսխալական չենք, բայց այս պայքարին նուիրուած ենք անմասցորդ ու ձեզ հետ միասին գնալու ենք մինչեւ յաղթական աւարտ:

«Ես ապաւինում եմ ձեր միասնութեանը, ձեր ուժին. մեզ ոչ մի բան չի կասեցնելու:

«Նիկոլն ու Ալիեւը կարծում էին, որ ժողովուրդն այլեւս գործօն չէ կարող են միմեանց հետ պայմանաւորուել եւ ժողովուրդին պարտադրել նոր գիշումներ: Մենք ցոյց տուեցինք, որ այդպէս չէ եւ հայ ժողովուրդը ոտքի է կանգնել եւ տեր է իր երկրին, տեր է իր հայրենիքին:

«Վստահ եմ, ձեզ անկից իւրաքանչիւրը զգացել է այդ պահը: Ձեզ անկից իւրաքանչիւրը հասկացել է իր անելիքը: Ձեզ անկից իւրաքանչիւրը տեսել է վերականգնման, կողք-կողքի կանգնելու ու աւելի հզօր լինելու անհրաժեշտութիւնը:

«Ուզում եմ արձանագրել այս օրերին մեր ձեռք բերած յաջողութիւնները:

«Առաջինը. «Դիմադրութիւն» շարժումը մասամբ կասեցրել է Արցախի կարգավիճակի նշանոյն իջեցնելու գործընթացը: Անուազն հանրային դաշտում իշխանութիւնը սկսել է քողարկել իր իրական նպատակները. արդէն փորձում է կեղծել իրականութիւնը եւ չունի համարձակութիւն ասելու այն, ինչին տանում են այս երկիրը:

«Երկրորդը. երկրում ստեղծուել է իրական քաղաքական ճգնաժամ, որը տեսնում են Նիկոլի միջոցով երկրում հակահայ ծրագրեր իրականացնողները, իսկ մեր դաշնակիցների ու գործընկերների համար ակնյայտ է դառնում, որ Նիկոլը կորցրել է իր օրինականութիւնը եւ նրա հետ այլեւս որեւէ բան պայմանաւորուելն անիմաստ է: Բոլորը գնալով հասկանում են, որ այս իշխանութիւնը օրինական չէ:

«Երրորդը. շարժումն ապացուցել է, որ հայ ժողովուրդը չի ընդունելու իրեն պարտադրուած՝ իր շահերին հակառակ որեւէ լուծում, հետեւաբար Նիկոլ Փաշինեանը երկիրը նոր գիշումների տանելու լիազօրութիւն չունի:

«Չորրորդը. շարժումն ակնյայտ է դարձրել, որ մեր երկրում ձեւաւորուել է այս իշխանութիւնների հեռացման հանրային պահանջ, որը մենք ձեւակերպեցինք Մայիսի 4-ին եւ խորհրդարանում ներկայացրինք այդ յանձնուողականին: Անցնող օրերի մեր գործունեութիւնը եւ հանրային արձագանգը դրա վրայ վկայութիւնն է:

«Ժողովուրդ ջան, այս ամէնը մենք արել ենք միասին, սրանք մեր կարելու ձեռքբերումներն են:

«Բայց սա բաւարար չէ, ձեռքբերումները պէտք է դարձնենք անշրջելի՝ հեռացնելով այս դաւաճան իշխանութեանը»:

Դիտել տալով, որ այս իշխանութիւնը աղետաբեր է Արցախի եւ հայութեան համար, պարտութեան եւ պատերազմի խորհրդանիշ ուժը չի կրնար ապահովել խաղաղութիւն, անվտանգութիւն, բարեկեցութիւն՝ Իշխան Սահաբէյեանի հաստատեց. «Մեր երկիրը պէտք է ունենայ ազգային իշխանութիւն, որը կը կասեցնի պետականութեան կործանման ընթացքը, կ'ապահովի սահմանների անձեռնմխելիութիւնը, կ'իրագործի տարածքային ամբողջականութիւնը պաշտպանելու իր հիմնական գործառոյթը, կը հաստատի արժանապատիւ խաղաղութիւն, պետականութիւնը կը վերադարձնի ժողովուրդին, Հայաստանը կը դարձնի արժանապատիւ, արդար, բարեկեցիկ երկիր: Մեզ պէտք է ամբոխահաճութեանը, սուտի, պարտուողականութեանը, քասոսին այլընտրանք առաջարկող իշխանութիւն, որը տեր կը կանգնի մեր յաղթանակներին, կը վերցնի պատմական ու քաղաքական պատասխանատուութիւն, կ'օգտագործի անցեալի դրականը, կը մերժի բացասականը, կը համադրի փորձը եւ երիտասարդութիւնը, իրապէս կ'առաջնորդուի արժանաւորների իշխանութեան սկզբունքով, կ'առաջարկի ներկայ վիճակից դուրս գալու լուծումներ, կը տայ ապագայի տեսլական: Մեզ պէտք է պատասխանատու իշխանութիւն»:

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչը ըսաւ, որ «Դիմադրութեան» խնդիրն է օր առաջ, ժամ առաջ ձեւաւորել առանց Նիկոլ Հայաստան: «Դաւաճանների այս կոյտին իշխանութիւնից հեռացնելուց յետոյ Հայաստանում կը ձեւաւորուի Ազգային համաձայնութեան ժամանակաւոր կառավարութիւն, որը երկիրը կտոր-կտոր յանձնելու Նիկոլի մտադրութեանը կը հակադրի Հայաստանը ոլորտ առ ոլորտ վերականգնելու քաղաքականութիւնը:

«Առաջին հերթին մեզ պէտք է համերաշխութիւն, կայունութիւն եւ անվտանգութիւն: Պէտք է վերականգնենք մեր ներքին միասնութիւնը: Հանդարտ ու գրագետ աշխատանքով կառուցենք ուժեղ Հայաստան: Ուժեղ ու կայացած պետութեան երեք հիմնասիւներն են՝ տրւետեսութիւնը, բանակը եւ արտաքին քաղաքականութիւնը:



«Նայեք, թե ովքեր են ներկայացնում այդ կենսականօրէն կարեւոր համակարգերը Հայաստանում: Նիկոլին հեռացնելուց յետոյ առաջին մեր երեք քայլերը լինելու են պետութեան ողնաշարը հանդիսացող համակարգերի վերակենդանացումը:

- «Սպառնալից, արժեք չստեղծող տնտեսութեան փոխարէն՝ մրցունակ ու առաջադէմ, նոր արհեստագիտութեան վրայ հիմնուած տնտեսութիւն,

- «Կազմաքանդուած, բարոյալքուած բանակի փոխարէն՝ իրապէս մարտունակ, սպառնալիցութիւններով յագեցած զինուած ուժեր, ո՛չ միայն պաշտպանողական, այլ հարկ եղած դեպքում նաեւ յարձակողական բանակ,

- «Մուրացիկ դիւանագիտութեան փոխարէն ազգային շահերի վրայ հիմնուած արհեստավարժ, նախաձեռնողական, գործընկերային, բայց ոչ ստրկական արտաքին քաղաքականութիւն: Արտաքին քաղաքականութեան ոլորտում պէտք է հանդէս գանք մեր օրակարգով, Արցախի ու Հայաստանի շահերն սպասարկող օրակարգով:

«Մենք դա կարող ենք, դա անելու ենք միասին: Ծրագրերը կան եւ ամէն օր մենք դա ներկայացնում ենք այստեղ քննարկումներում: Այս հարթակից տալիս ենք հիմնական ուղղութիւնները: Երկիրն այս վիճակից դուրս բերելու ե՛ւ ծրագիրը կայ, ե՛ւ մարդուժ կայ»:

Ան դիտել տուաւ, որ երեքշաբթի, 17 Մայիսը կարելու օր պիտի ըլլայ, ամբողջ մայրաքաղաքին մէջ անհնազանդութեան ցոյցերը պիտի աշխուժանան, որպէսզի կարելի ըլլայ ամբողջ քաղաքի եռուցեղ կասեցնել՝ կոչ ուղղելով բոլորին միանալու եւ շարունակելու ցոյցերն ու «Դիմադրութեան» նախաձեռնութիւնները: «Երեքշաբթի օրուանից շարժմանը ամբողջութեամբ նոր թափ ենք տալու. մեր առջեւ դրուած խնդիրները, ինչին հասել ենք՝ բաւարար չէ, պէտք է կազմակերպուածութեան նոր մակարդակ, որ ձեռքբերումները դարձնենք անշրջելի: Յոգնել չկայ, նահանջ չկայ, մինչեւ վերջ»:

16 Մայիսին «Դիմադրութեան» շարժումը Երեւանի փողոցներուն մէջ 5 տարբեր ուղղութիւններով իրազեկման անհնազանդութեան ինքնաշարժով երթ կատարեց եւ կաթուածահար ըրաւ երթեւեկը:

ԻՐԱՒԱՑԻ ԷՔ, ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԽԱՔԵՊԱՏԻՐ ԿՈՒՍԱԿԳՈՒԹԻՒՆ Է...



Մարիա Գարիբյան

Այո՛, իրաւացի էք, Դաշնակցութիւնը ահաբեկչական կուսակցութիւն է, որովհետեւ վերականգնեց մեր ազգին զգտնուած արժանապատուութիւնը, վերաբարձրացուց

ճակատ, ազատագրեցին Արցախի հայրենիքը եւ արժանացան նահատակութեան դափնեպսակին: Անոնց ազգանունները մնալով ազգայիններու համար անհաւատարմութիւն եր:



Այո՛, իրաւացի էք, Դաշնակցութիւնը խելագարներու համախմբում է, որովհետեւ տակաւին կը հաւատայ, որ Արարատ լեռը հայոց սրբազան լեռն է եւ սերունդներ կը դաստիարակէ օր մը Արարատի գագաթին եռագոյնը տեղադրելու ցնորքով:

մեր ճակատները եւ հանգչեցուց մեկուկէս միլիոն նահատակներու հոգիները՝ վրեժի գնդակին արժանացնելով Յեղասպանութիւնը ծրագրած ու իրագործած ոճրագործները:

Այո՛, իրաւացի էք, դաշնակցականները Երեւանի փողոցներուն մէջ յանուն Արցախի հանրահաւաքներ կազմակերպելու փոխարէն թող մեկնէին Արցախ եւ կռուէին: Իրաւացի էք, որովհետեւ շարժումը կազմակերպող կամ անոր մասնակցող երիտասարդները Արցախի ռազմադաշտին վրայ իրենց նկարները ցոյց մարդկանց չհրապարակեցին, իրենց վիրաւոր մարմինները չցուցադրեցին, Շուշիի ու Յաղարթի կորուստով խոցուած հոգիները չնկարեցին, իրենց նահատակ ընկերները հողին յանձնած ժամանակ հայրենիքը փրկելու յոյսը անոնց անշնչացած մարմիններուն հետ չթաղեցին: Իրաւացի էք, որովհետեւ այդ տղոց համար հայրենիքի սիրոյն պատերազմիլը հայրենիքին ձօնուած դոյզն պարգէն է եւ ամօթ կը համարեն պա-

Այո՛, իրաւացի էք, Դաշնակցութիւնը ազգասեր կուսակցութիւն է, փաստօրէն 1914-1915-ին երբ մեր գիւղերն ու քաղաքները տմարդի թուրքի ասպատակութիւններուն կ'ենթարկուէին, Դաշնակցութիւնը ազգին տեր դարձաւ, նախաձեռնեց Ֆիտայական ու կամաւորական խումբերու կազմաւորման եւ դաշնակցական տղաքը հերոսաբար կռուեցան ու պահեցին ազգին պատիւը:

Այո՛, իրաւացի էք, Դաշնակցութիւնը խաբէպատիր կազմակերպութիւն է, որովհետեւ 132 տարի մեզ խաբեց եւ կը շարունակէ խաբել համոզելով, որ Վանն ու Մուշը, Սասունն ու Կարսը հայկական հողեր են: Կը համոզէ, որ Արեւմտահայաստանը մեր հայրենիքն է եւ մենք այնտեղ ապրած ենք մեր ծագումէն մինչեւ տեղահանութիւն: Այնտեղ են մեր Ս. Կարապետը, Ս. Առաքելը, Ս. Կիրակոսը, այնտեղ է Սա-



նասարեան վարժարանը, Մարութանն ու Մասիսը, Վանայ լիճն ու Ախթամարի Ս. Խաչը: Դաշնակցութիւնը անկրակօրէն կը գրապարտէ երբեք շեշտէ, թէ անոնք բոլորը հայկական են:

Այո՛, Դաշնակցութիւնը հայրենասեր կուսակցութիւն է, որովհետեւ 20-րդ դարու սկիզբը, երբ հայրենիքը գոյութիւն ունենալ-չունենալու ճգնաժամին դէմ յանդիման կը գտնուէր՝ Դաշնակցութիւնը պետականութիւն կերտեց, անկախութիւն հռչակեց, որ գէթ այսօրուան այս փոքր ու անկախ հայրենիքն ունենալիքն ու անհայրենիք ազգ չդառնալիքը:

Այո՛, իրաւացի էք, դաշնակցականները դաւաճաններ են, որովհետեւ 20-րդ դարու վերջը սկսած Արցախի ազատագրական պայքարին դաւաճանեցին ազգադուրստ սկզբունքները եւ հոգիները ուսերուն վրայ շալկած փութացին ռազմա-

ՄԻ՛ ՇԵՂԷՔ ՍԼԱՔՆԵՐԸ



Գեորգ Յակոբճեան

Հայոց Տեղասպանութեան 107-րդ տարելիցի ոգեկոչման պաշտօնական յայտարարութիւններուն եւ ընկերային ցանցերուն վրայ ընթացող քննարկումներուն մէջ անուղղակի, բայց շատ վտանգաւոր շեշտադրումներ կային, որոնք գիտակցաբար եւ ենթագիտակցաբար հանրութիւնը կը շեղէին ոգեկոչման հիմնական նպատակէն ու խորհուրդէն՝ արդարութեան վերականգնումի պահանջատիրութենէն: Այս շեշտադրումներուն միտք բանին այն է, թէ Հայոց Տեղասպանութեան գոհերու յիշատակը յարգելու լաւագոյն միջոցը հզօր ու ժողովրդավար պետութիւն կառուցելն է:

Չեն գլուխը ուրիշ տեղ է թաղուած, բայց... Երկու բարձրաստիճան ղեկավարներուն խօսքերուն մէջ գործածուած «լաւագոյն ձեւ»-ը եւ «ամենատպաւորիչ միջոց»-ը լուրջ վտանգներ կը պարունակեն, ազգային ռազմավարութեան տե-

սակետ ահաւոր կործանարար են եւ պահանջատիրութեան սլաքները բոլորովին այլ տեղ կ'ուղղեն: Անոնց խօսքերուն մէջ ակնարկ չկայ Հայոց Տեղասպանութեան հետեւանքներու վերացման անհրաժեշտութեան եւ անխուսափելիութեան մասին:



Օրինակ՝ ՀՀ նախագահը իր ուղերձին մէջ կ'ըսէ. «Մենք գիտակցում ենք, որ մեր նահատակուած հայրենակիցների յիշատակին յարգանքի տուրք մատուցելու լաւագոյն ձեւը հզօր եւ ժողովրդավար Հայաստանի կայացումն է, մեր ժողովրդի բարօր կեանքի, մեր երկրի սահմանների ամրութեան ու անվտանգութեան ապահովումն է, Հայաստանի միջազգային հեղինակութեան ամրապնդումն է»: ՀՀ վարչապետի պաշտօնը զբաղեցնողը իր ուղերձին մէջ ոչ միայն կը ձախողի արդարացնել այս օրերուն ընթացող հայ-թրքական յարաբերութիւններուն հիմնական մոլիչ ուժն ու տրամաբանութիւնը, այլեւ իր խօսքի վերջաւորութեան հետեւեալը կ'ըսէ.

«Հայոց պետականութիւնը Մեծ Եղեռնի գոհերի, մեր բոլոր նահատակների յիշատակը յարգելու ամենատպաւորիչ միջոցն է եւ պիտի դառնայ հայ ժողովրդի ապրելու անկոտորում կամքի խորհրդանշան եւ երաշխաւոր»:

Հենց մեր այս կամքն է խորհրդրդանշանը մարտի 24-ի յիշատակը: Երբեք չենք զոյգում մեր նախնիներին եւ մեր սերունդներին: Այդ խոստումը պիտի կատարուի, այդ ուխտը պիտի ի կատար ածուի: Սրանում է Ապրիլի 24-ի ամենամեծ խորհուրդը»:

Ո՛չ, նախագահն ու վարչապետը չարաչար կը սխալին իրենց «լաւագոյն ձեւ»-ի եւ «ամենատպաւորիչ միջոց»-ի դեղատոմսին մէջ ու դիտաւորեալ հանրութիւնը կը շեղեն պայքարի եւ պահանջատիրութեան բնածին ու արդար տրամադրութենէն:

Այսպէս՝ «մեր նահատակուած հայրենակիցների յիշատակին յարգանքի տուրք մատուցելու լաւագոյն ձեւը» ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՎԱԳՆՈՒՄՆ է, աննահանջ պայքարն է՝ խլուած իրաւունքներուն վերատիրանալու, համապատասխան հատուցման արժանանալը, նոր ցեղասպանութիւններ կանխարգիլելը: Աւելին՝ «մեր բոլոր նահատակների յիշատակը յարգելու ամենատպաւորիչ միջոցը» Թուրքիան իր անցեալի ու ներկայի պետական յանցագործութիւններուն համար պատասխանատուութեան ենթարկելն ու միջազգային օրէնքի համաձայն հատուցումներու եւ անցումային արդարութեան ձեռնարկելն է: Միայն արդարութեան վերականգնումով մենք իսկապէ՛ս կը յարգենք բազմազար նահատակներուն եւ Տեղասպանութենէն վերապրած սերունդներուն յիշատակը:

Մի՛ շեղէք հայոց պահանջատիրութեան սլաքները: Ոճրագործը ձգած, ընդհակառակը՝ մինչ օրս քեզ ոչնչացնելու ուղղ ոճրագործին հետ սիրաբանութեան ելած ու յանկարծ ի սկզբանէ ձախողութեան դատապարտուած բանակցութիւնները չվտանգելու սիրոյն հանրութեան ուշադրութիւնը մի՛ շեղէք եւ ձեր նե-


Մի՛ շեղէք հայոց պահանջատիրութեան սլաքները: Ոճրագործը ձգած, ընդհակառակը՝ մինչ օրս քեզ ոչնչացնելու ուղղ ոճրագործին հետ սիրաբանութեան ելած ու յանկարծ ի սկզբանէ ձախողութեան դատապարտուած բանակցութիւնները չվտանգելու սիրոյն հանրութեան ուշադրութիւնը մի՛ շեղէք եւ ձեր նե-

Ոչ ոք կրնայ ամարկել վերուշեալներուն իրաւացիութեան ու վաւերականութեան: Խելամիտ ու ազգասեր ո՞ր հայը չ'ուզէր, որ հզօր, ինքնիշխան ու ժողովրդավար պետութիւն մը կառուցուի: Ո՞վ չի հաւատար, որ հզօր պետութիւնը շատ աւելի ազդու ձեւով կրնայ պահան-

Մի՛ շեղէք հայոց պահանջատիրութեան սլաքները: Ոճրագործը ձգած, ընդհակառակը՝ մինչ օրս քեզ ոչնչացնելու ուղղ ոճրագործին հետ սիրաբանութեան ելած ու յանկարծ ի սկզբանէ ձախողութեան դատապարտուած բանակցութիւնները չվտանգելու սիրոյն հանրութեան ուշադրութիւնը մի՛ շեղէք եւ ձեր նե-

Պոստալետ

ԿԻՆԸ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԸ



Մարուշ Երամյան

Կան բաներ, որոնք չեն մտածուիր, պարզապես կ'ապրուին, երբ ստիպուած են ապրիլ կացութիւն մը: Անշուշտ կը հեռանաս, եթէ առիթ ունիս նման անապրելի կացութիւններէ հեռանալու: Եթէ չունիս, պարզապէս կ'ապրիս:

Եթէ ֆրանսական կրթութիւն ստացած ըլլայի, գրութիւնս պիտի սկսեի երկու հարցումներով եւ անոնց շուրջ հիւստի մտածումներուս ցանցը՝ ի՞նչ կը նշանակէ կին ըլլալ, եւ ի՞նչ ըսել է պատերազմ, հետեւաբար՝ ի՞նչ կը նշանակէ կին ըլլալ պատերազմի մէջ - կարծես շատ պարզ ըլլար կին ըլլալը խաղաղութեան մէջ:

Սակայն մէկ բան է ապրիլ խաղաղ, գոնէ համեմատաբար խաղաղ քաղաքի մը մէջ եւ գրել պատերազմի մասին, եւ ամբողջովին այլ բան՝ ըլլալ պատերազմի մը կեդրոնը: այս պարագային հաւանաբար գրել չըլլար, որովհետեւ երբ մահը կը պարէ շուրջը, կրնաս միայն խիտ կերպով ապրիլ քեզի տրուած կեանքը, մէկ աչքիդ խոշորացոյց դրած, միւսին՝ վարդագոյն ակնոց:



Այստեղ կ'ուզեմ լուսարձակս բանալ այն դրական երեւոյթներուն վրայ, որոնք կը ծաղկին կիններուն եւ անոնց ներքին ոյժին եւ տոկունութեան շնորհիւ, ամենէն ժխտական եւ դժխտ պարագաներու՝ պատերազմներու ընթացքին:

Հետաքրքրական է, որ կիները իրապէ՛ս տարբեր կեցուածք ունին պատերազմին մէջ, անկախ այն իրողութենէն, որ կարգ մը կիներ այրերուն հաւասար զէնք կը վերցնեն ու ճակատ կը մեկնին:

Պատերազմները ո՛չ նորութիւն են, ոչ ալ միայն կարգ մը վայրերու-երկիրներու յատուկ: Բոլոր երկիրներն ալ, երկիր ըլլալէ առաջ ու մասնաւոր՝ վերջ, ապրած են պատերազմը: ամէն տեղ ալ կիները նոյն կեցուածքը դրսեւորած են:

Նշեմ որ պատերազմը, փարատըսալ կերպով որոշ հանգիտութիւններ ունի կատարողական արուեստներուն հետ: որքան ալ նկարագրութիւնը մանրամասն եւ ճոխ ըլլայ, ճշգրիտ կամ իրապէ՛ս արտայայտիչ, ատիկա կը մնայ տպաւորութիւն եւ ոչ՝ արուեստէն ծնած ապրում, գոր կարելի է միայն ու միայն կենդանի ելոյթի մը ներկայ ըլլալով ունենալ:

Պատերազմը եւս պէ՛տք է ապրիլ, գիտնալու եւ իմանալու երեւոյթին տարողութիւնը: այդ մասին կարդալը կամ լսելը շատ-շատ գիտելիք կ'աւելցնէ - թէեւ չեն գիտեր թէ որո՞նք պետք է նման «գիտելիք»ը - բայց չի կրնար ապրումը փոխանցել:

Ժողովուրդը կ'ըսէ՝ կրակը ինկած տեղը կ'այրէ: այս եւ այլ առաջներ ապրելով հաստատեցինք, որ ժողովրդական իմաստութիւնը միշտ ալ անսխալական կը մնայ: անշուշտ կրնար ըսել, թէ հարիւր առ հարիւր կը զգամ Արցախի պատերազմի օրերուն կիներուն ապրածը, Հայաստանի մութի ու ցուրտի տարիներուն կիներուն տառապանքը, նոյնիսկ՝ Հալէպի Նոր Գիւղ թաղամասին մէջ ապրող կիներուն ապրածը կրցած եմ լրիւ ապրիլ: Թերեւս կը հասկնամ, բայց չեմ ապրիր:

Պատերազմներու ընթացքին իւրաքանչիւր ընտանիքի հարցերը կը մեծնան, տարողութիւն կը ստանան եւ ընդհանրապէս կը ծանրանան կիներուն ուսերուն: Բայց արարները կ'ըսեն, չէ՞, որ գլխուն ծանրութիւն կրող կինը միշտ աւելի շիտակ կը քալէ: Անշուշտ անկարկը անապատի պետիւն կիներուն մասին է, որոնք շատ երկար հեռաւորութիւններէ ջուր կը կրեն իրենց ընտանիքներուն համար, ջուրի մեծ կարասները իրենց գլուխներուն վրայ հաւասարակշռելով:

Չհասկնալ վիճակը, բնական է, բայց դիտել, մտածել ու փորձել բան մը ընել, թէկուզ փոքր քայլ մը, կացութենէն փշրանք մը բան փոխելու համար: այստեղ է, որ կիները կը տարբերին:

Տղամարդիկ մեծ քայլերով կ'առաջնորդուին, ու եթէ առիթ չունենան

մեծ քայլեր առնելու, ընդհանրապէս քայլ չեն առներ: Մինչ կիները միշտ ալ գոհացած են փոքր քայլերով: Եւ ճամբու վերջաւորութեան կիներն են, որոնք իրենց փոքր քայլերուն գումարով իրապէ՛ս երկար ճամբայ կտրած կ'ըլլան:

Եւ ուրեմն, տագնապի եւ դժուարութիւններու պարագային, կը սկսին ամենէն փոքր, ամենէն առօրեական քայլերով՝ տունը, ընտանիքը կը դառնան պաշտպանողական առաջին բջիջը, ուր կին-մայրը կը փորձէ չակերտեալ «խաղաղութիւն» մը պահել, անջատել տունը դուրսի աշխարհէն՝ ռումբեր, ատեր ու մահ ... եւ ընտանիքը պատսպարել այնպէս, կարծես ոչինչ կայ արտասովոր, իբր թէ ամէն բան սովորական է ...

Այս բոլորը կ'ըլլան ոչ թէ մտածել-ծրագրելով - խորքին մէջ ժամանակ չկայ արդէն մտածել-ծրագրելու - այլ վերապրումի, survival-ի (դժբախտաբար այս բառին ճիշդ իմաստը արտայայտող բառ չունիմ) բնագրով, որ կիներուն պարագային քիչ մը աւելի զօրաւոր կերպով կը բանի:

Ապրելու, եւ ոչ միայն ապրելու, այլ մասնաւոր ԱՊՐԵՑՆԵՆԵԼԻ բնագրէն, որ կը մղէ կիները, մինչ ուրիշ բնագր մըն է, որ կը շարժէ այրը՝ ՓՐԿԵԼՈՒ ԲՆԱԳՐԸ: Հաւանաբար այս է պատճառը, որ կիները շատ աւելի կը տոկան ծանր պայմաններու, ամուսնական կեանքէն ներս, միայն իրենց զաւակները ապրեցնելու բնագրով՝ «զաւակներուս համար», ինչպէս շատ յաճախ կը լսենք կիներու բերնէն:

Ինչ որ կը կորսնցնենք, ինչքերէ, հնագիտական կառոյցներէ, մարդկային հսկայ մշակոյթ, նոյնիսկ մարդկային կեանքերէ անդին, ՄԱՐԴը ինքն է, գլխազիր մարդը, իր ամբողջ մարդկայնութեամբ, որուն համար այնքան բան կը ծախսուի, մասնաւոր «յառաջացած», «արեւմտեան» երկիրներուն մէջ:

Մարդուն կորուստը այնքան մեծ է: Ուոլֆկանկ Պորխերթը (Wolfgang Borchert) իր մէկ մանրապատումին մէջ կ'ըսէ:

«Երբ պատերազմը վերջացաւ, գիտուող տուն վերադարձաւ: Բայց հաց չունէր: Տեսաւ մէկը, որ հաց ունէր: Սպանեց, հացը առաւ: - Իրաւունք չունիս անձ մը սպանելու, - դատաւորը ըսաւ: - Ինչո՞ւ, - զարմացաւ գիտուողը:»:

Բոլորս ալ, տարբեր պայմաններու մէջ մեր մորթին վրայ զգացած ենք, թէ որքան փխրուն է կեանք ըսուածը, որքան դիւրաբեկ, եւ որովհետեւ այդպիսին է, ուրեմն գալիքը որքան որ մերն է, - որովհետեւ մարդ ենք եւ գիտենք ծրագրել, - նոյնքան ալ մերը չէ, երբ անհաշիւ են ինկող ռումբերը եւ անկանխատեսելի է յաջորդ վայրկեանը:

Քիչ բան չէ՛ կեանքը ապրիլ սորվիլ իր ներկային մէջ, բայց մասնաւոր վերադառնալ կեանքին իմաստ տուող եութեանկան արժեքներուն, որովհետեւ երբ հարուստը նոյնպէս կը սպանուի, որքան աղքատը, ուրեմն ա՛լ բան չունենար հպարտանալիք, իր աշխատանքէն ու զանուութենէն անդին: Սորվեցանք վերձգնահատել մարդկային այն արժեքները, գորս մոռացութեան տուեր էինք:

Այս ամբողջին մէջ ի՞նչ է կնոջ դերը, Ապրեցնելու բնագրէն անդին: Սպասելի է, որ ապրեցնելու կողքին եւ անկէ անդին շարունակել մարդ կերտելու իր առաքելութիւնը, որ ոչ միայն մայրերուն առանձնաշնորհն է, այլ նաեւ այն մասնագետներուն, որոնք մեծամասնութիւնը կիներ են ամէն տեղ՝ ուսուցչութիւններուն:

Կին մը կրնա՞յ նման ծանր պահերու նման ծանր պարտաւորութիւն կը շարունակել կրել:

Ինծի ծանօթ երեք պարագաներու՝ պաղեստինեան աւելի քան կէս դարէն ի վեր ընթացող պատերազմին, Հալէպի պատերազմի ծանր տարիներուն եւ Արցախեան 44-օրեայ պատերազմի ընթացքին կինը կրցած է կրել ոչ միայն իր ուսերուն դրուած բեռը, այլ եւ իր ինքնակամ բեռը կրել արժանապատիւ լռութեամբ: Պաղեստինցի կիները կը շարունակեն ծնունդ տալ զաւակներու, թէեւ շատ լաւ կը գիտակցին, թէ անոնք, այդ զաւակները իրենցը չեն, այլ հողինն են, հողը պահելու համար ծնած են: Եւ զանոնք հողին կը յանձնեն իրենց բաժին ցաւը գիտակցօրէն լռելով, արցախցի հայուհիները կը շարունակեն իրենց ամենօրեայ պայքարը, իսկ հալէպահայ կինը կը շարունակէ ապրեցնել, մեծ արժանապատուութեամբ, մայր գաղութի նոր սերունդը:

Դժբախտաբար այնքան քիչ գրուած է պատերազմներու ընթացքին կիներուն ապրած ամենօրեայ, «սովորական» սխրագործութիւններուն մասին, թէեւ համեմատաբար աւելի գրուած է անոնց կրած տառապանքին մասին:

Ի՞նչ զարմանալի երեւոյթ է, որ երբ կինը կացութեան մը բանտարկեալ կը դառնայ, կը բացուին իր ստեղծագործական երակները: Ստեղծագործութիւնը այս պարագային կ'երթայ ոչ թէ արուեստներուն, այլ՝ սովորական արարքներու, ամենօրեայ ցաւը տանելի դարձնելու միջոցներու ստեղծումին:

Մութին մէջ մոմ մը, մոմեր վառել:



ՈԳԵԿՈՉՈՒՄ ԱՐՑԱԽԻ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻ ՆԱԷՊԱՆԱՅ ԵՐԵՐ ՆԱՏԱՏԱԿՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Կրթասիրաց Ս. Չեմպերճեան Երկրորդ Վարժարանի Շնողաց Յանձնախումբը աշակերտներուն մօտ հայրենասիրութեան ոգին բարձր պահելու առաջադրանքով, Ուրբաթ, 13 Մայիս 2022-ի առաւօտուն, Կրթասիրաց Մշկթ. Միութեան «Փիւնիկ» սրահէն ներս կազմակերպեց Արցախի

Բացման խօսք ներկայացուց Շնողաց յանձնախումբի ատենապետուհի թշկի. Թամար Բարսեղեան-Սարգիս: Ան յայտնեց, թէ հալէպահայ նահատակներուն նուիրուած ոգեկոչումի այս հանդիսութիւնը մեզի կը վերադարձնէ 30 տարիներ առաջ՝ Մայիս 1992-ին իրականացած Շուշիի



գոյապայքարի հալէպահայ երեք նահատակներուն նուիրուած աշակերտական ոգեկոչում:

Հանդիսութենէն առաջ, աշակերտները վարժարանի հոգեւոր հովիւ Արժ. Տ. Խորէն քնյ. Պերթիզեանի եւ Շնողաց յանձնախումբին գլխաւոր

ազատագրումին: «30 տարիներ ետք հայ ժողովուրդը դարձեալ ենթարկուեցաւ Թուրքիի ոճրագործ արարքներուն, այս անգամ Արցախի մէջ», աւելցուց ան: Տիկին Թամար կոչ ուղղեց աշակերտներուն նահատակներուն նման ըլլալու հայրենասէր, սիրելի հայրենիքը իր անբաժան Արցախով եւ լաւապէս տիրապետելու հայոց լեզուին եւ պատմութեան, նոյն կամքով եւ հաւատով շարունակելու մեր պայքարի երթը:

Պատասխան վրայ ցուցադրուեցաւ վաերագրական տեսերիզ մը, 1992-ին Արցախի ազատագ-



րութեամբ, մեկնեցան Ազգ. Գերեզմանատուն, ուր Արցախի գոյապայքարի հալէպահայ նահատակներուն՝ հրամանատար Յարութ Բանոյեանի, Մոսիկ Սեքլեմեանի եւ Յակոբ Աթաբարճեանի նուիրուած յուշակոթողին առջեւ Շնողաց Յանձնախումբի ատենապետուհի թշկի. Թամար Բարսեղեան-Սարգիս յուշակոթողին մասին բացատրութիւն տուաւ, ապա քահանայ Հայրը հոգեհանգստեան արարողութիւն կատարեց եւ աղօթք բարձրացուց ան Աստուած՝ Արցախի նահատակներու հոգիներուն խաղաղութեան համար: Աւարտին աշակերտները խունկ եւ մոմ վառեցին եւ ծաղիկներ գետեղեցին հալէպահայ անմահ հերոսներու յուշակոթողին առջեւ:



րումին եւ ապա Արցախի գոյապայքարին մասին: Տիկ. Թամար ներկաներուն ընթերցեց հալէպահայ երեք հերոսներուն՝ հրամանատար Յարութ Բանոյեանի, Մոսիկ Սեքլեմեանի եւ Յակոբ Աթաբարճեանի կենսագրութիւնները, ապա բեմ հրաւիրեց օրուան բանախօս օրդ. Ալին Բանոյեանը, փոխանցելու իր խօսքը:

Միջնակարգի եւ երկրորդականի աշակերտները վարժարան վերադառնալով մասնակից դարձան հալէպահայ նահատակներուն նուիրուած ոգեկոչական հանդիսութեան, որուն ներկայ գտնուեցան նաեւ վարժարանի հոգեւոր հովիւ Արժ. Տ. Խորէն քնյ. Պերթիզեան, Արցախի նահատակներուն՝ հրամանատար Յարութ Բանոյեանի քոյրը, Մխիթարեան Վարժարանի տնօրէնուհի՝ օրդ. Ալին Բանոյեան, վարժարանի Հոգաբարձութեան ատենապետ տղթ. Ռաֆֆի Չեյթեան, Հոգաբարձութեան անդամներ, վարժարանի տնօրէն երկր. Անդրանիկ Պողոսեան, վարժարանի ընդհ. տեսուչ օրդ. Մարալ Դերձակեան, մանկապարտիզ պանուհի տիկ. Ուսատ Չգոյշեան, ուսուցչական եւ վարչական կազմերը եւ Կրթասիրաց Մշկթ. Միութեան անդամներ:

Սրահը յարդարուած էր լուսանկարներով, որոնք պատրաստած էին աշակերտները ան ի մասնակցութիւն Շնողաց յանձնախումբին կազմակերպած «Թշնամին մէկ է Հայաստանի, Արցախի եւ Սուրիոյ համար» խորագիրով լուսանկարչական նախաձեռնութեան:

Հանդիսութիւնը սկիզբ առաւ Սուրիոյ, Հայաստանի, Արցախի եւ Շուշիի քայլերգներով: Ապա ներկաները մէկ վայրկեան յոտնկայս յարգեցին Արցախի նահատակներուն յիշատակը:

Բանոյեանի անունով կոչուեցաւ եւ տեսերիզով ցոյց տուաւ աշակերտներուն կեդրոնի լուսանկարները:

Օրդ. Ալին աշակերտները հրաւիրեց մեր նախնիներուն ուղիով ընթանալու եւ աշխատանքով ու պայքարով հայ ժողովուրդին ապագայի պատմութիւնը կերտելու:

Շնողաց յանձնախումբի ատենապետուհին շնորհակալութիւն յայտնելով օրդ. Ալինին, անոր նուիրեց աշակերտուհի ժողիան Պշարային գծագրած հրամանատար Յարութ Բանոյեանի նկարը:

Աշակերտները ոգեւորուելով յոտնկայս հայրենասիրական երգեր երգեցին, տեսուչ բարշ. Կարօ սրկ. Պալեանի ղեկավարութեամբ, ապա պարուն Կարօն մեներգեց «Տեր Ողորմեա»-ն:

Աւարտին, Արժ. Տ. Խորէն քնյ. Պերթիզեան իր սրտի խօսքը փոխանցեց, յայտնելով, որ սուրիահայութիւնը հայրենիքին տուած է նահատակներ, որոնք իրենց արիւնը թափեցին Արցախի փրկութեան եւ ազատութեան համար: Ան նշեց, թէ հալէպահայ ընտիր տղոց նահատակութիւնը յիշելով ցաւ կը զգանք, որովհետեւ զանձեր կորսնցուցինք, միեւնոյն ժամանակ պարծանքի եւ հպարտութեան զգացումներով կը յիշենք հայրենիքին համար անոնց կատարած սխրագործութիւնները:

Տեր Խորէն այս առիթով փոխանցեց Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի հայրական օրհնութիւններն ու գնահատանքը:



Ոգեկոչումը փակուեցաւ «Պահպանիչ» աղօթքով:

Աշակերտները, հայրենիքին եւ ազգային արժեքներուն տեր կանգնելու գիտակցութեամբ վերանորոգեցին իրենց ուխտը, ուսմամբ եւ աշխատանքով շարունակելու հայ ժողովուրդին միասնական երթը:

Թողակից

ՄԻ՛ ՀԵՂԷՔ... Սկիզբ՝ էջ 5

տերը հայ հանրութեան վրայ մի՛ արձակեք: Զիչ մնաց՝ ձեր ելոյթներուն մէջ հայութիւնը մեղադրեք, որ Յեղասպանութեան լեղին խմեց... Ի՞նչ, եթէ Յեղասպանութիւն պատահած չլլար, եթէ ու ժողովրդավար պետութիւն կառուցելը առաջնային նպատակ պիտի չլլար: Ձեր ազգադաւ ու ստրկամիտ տրամադրութիւններն ու նպատակները կեանքի կոչելու համար հանրութիւնը մի՛ շեղեք իր իրագործելիք հիմնական նպատակէն՝ արդարութեան վերականգնումի պայքարէն: Յեղասպանութեան ոգեկոչումը ներքին սպառնալիք համար չէ, այլ ուխտի ու պահանջատիրութեան վերանորոգման օր:

Ինչպէս կ'ըսէ Պերճ Չեյթուեցեան, «եթէ այս (բարեկեցիկ երկիր կառուցելու) գիտակցութիւնը գերիշխի մեզ անում, դառնայ միասնական կամք, մենք մեր վրէժը լուծած կը լինենք գոնէ մասամբ...»: Այո՛, հզօր ու բարեկեցիկ պետութիւն կառուցելը «գոնէ մասամբ» կը մեղմացնէ հանրութեան հաւաքական ցաւն ու տագնապը, բայց այդ հաւաքական ցաւը ամբողջութեամբ կը բուժուի, տագնապը կը վերանայ, եւ բոլոր նահատակներուն ու վերապորոհներուն յիշատակը արժանիօրէն կը յարգուի միայն ու միայն Յեղասպանութեան հետեւանքներու վերացումով եւ արդարութեան վերականգնումով:

«Դրօշակ» թիւ 5, (1666), 2022թ.

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



ԽՈՅ

Երկար սպասուած սերը պիտի թակէ ձեր դուռը, անսահման ուրախութիւն պատճառելով ձեզի:



ՑՈՒԼ

Երկար ժամանակ ձեր հարազատներէն հեռու մնալը բացասաբար պիտի ազդէ ձեր հոգեկան աշխարհին վրայ: Շաղուեցէ՛ք ձեր մտերիմներուն հետ, թէ ոչ պիտի կորսընցնէք զանոնք:



ԵՐԿՈՒՐԵԱԿ

Չափազանց խճողուած շաբաթ մը պիտի ունենաք: Պիտի ծանրաբեռնուիք զանազան գործերով:



ԽԵՅՁԵՏԻՆ

Ձեր ազատ ժամերը հաճելի անցնելու համար կարելի է նոր գործի մը ձեռնարկել, կամ նոր նախասիրութիւն մը ձեռք բերել:



ԱՈՒԾ

Ճամբորդութիւն մը կրնայ վերաթարմացնել ձեր ուժերը: Ամառնային արձակուրդը կարելի է անցընել ծովափնեայ կամ լեռնային վայրերու մէջ:



ԿՈՅՍ

Այս շաբաթ ձեր բոլոր գործերը կուտակուած են: Թերացումներէ խուսափելու համար կարելի է հանգիստի փոխարէն քիչ մը աւելի աշխատանքի ճիգ թափել:



ԿԵՒՈՅ

Նոր ծանօթութիւն մը շուտով սերտ բարեկամութեան պիտի վերածուի:



ԿԱՐԻՃ

Երկարատեւ եւ յոգնասպառ աշխատանքէ ետք յաջողութեան պտուղը պիտի քաղէք: Ձեր արդար աշխատանքի շնորհիւ Նիւթական մեծ պարգէ կամ պաշտօնի բարձրացում պիտի շնորհուի ձեզի:



ԱՂԵՂՆԱՊՐ

Յետեւեցէ՛ք ձեր ներքին ձայնին եւ պիտի չզոջաք: Չոյշ եղէ՛ք չարակամ եւ նախանձոտ մարդոցմէ, անոնք միշտ պիտի փորձեն սխալ ճամբայ ուղղորդել ձեզի:



ԱՅՏԵՂՋԻՐ

Դժբախտութիւնները ուրուականներու նման երկար ժամանակէ ձեզ կը հետապնդեն, սակայն անոնք վախճանը շատ մօտ է: Այս շաբաթ աւետիսները պիտի թակեն ձեր դուռը:



ՋՐՈՍ

Աշխատանքային դժուար եւ ծանրաբեռնուած ժամանակաշրջան մը կը սպասէ ձեզի: Չանց առէ՛ք ձեր երազային ծրագիրները եւ աշխատանքի վրայ կեդրոնացէ՛ք:



ՁՈՒԿ

Մտովին եւ մարմնապէս հանգըտանալու կարիքը ունիք: Այս շաբաթավերջը լաւ առիթ է արձակուրդ մը առնելու եւ ճամբորդութեան մեկնելու համար:



Յայ Գրողներու Յուշերէն

ՈՒԻԼԻԸՄ ՍԱՐՈՅԵԱՆԻ ԱՆԿԱՏԱՐ ՄԵԱՅԱԾ ՓԱՓԱՔԸ



Ինչո՞ւ թերեւոյժ աճիւնի սափորը: Արարողութիւնը կատարուեցաւ Կոմիտասի անուան զբօսայգիի պանթէոնին մէջ:

16 Մայիս 1981-ին կը մահանայ Ուիլիըմ Սարոյեան: Սարոյեանի մահուան լուրը արագօրէն կը տարածուի ողջ ԱՄՆ-ի, Եւրոպայի մէջ եւ կը հատէ հորիզոնային Յայաստանի սահմանները: Սարոյեանի մահուան լուրը նախ կը հասնի հորիզոնային Յայաստանի վերնախաւին: Այդ օրերու անցուդարձերուն մասին կը պատմէ պետական գործիչ, գրականագետ Կարլեն Դալլաքեան:

Ան մասնաւորապէս կը յիշէ. «Ամերիկայէն լուր ստացանք, թէ պիտի բերեն Ուիլիըմ Սարոյեանի աճիւնի սափորներէն մէկը: Մեծ վարպետը կտակած էր՝ իր աճիւնները ամփոփել երեք սափորներու մէջ. մէկը տանիլ Երեւան եւ յանձնել մայր հողին, միւսը թողուլ Ֆրեզկոյի մէջ, իսկ երրորդը օղէն սրսկել Պիկետի վրայ, երբ ան ազատագրուի: Գրողի վերջին փափաքի առաջին երկու կէտը իրականացաւ անյապաղ: Պատուիրակութիւն մը ժամանեց Երեւան, իր



Կարլեն Դալլաքեան «Յուշապատում. դէպքեր, իրողութիւններ, մտորումներ»:

Դժբախտաբար հանրածանօթ գրողին երրորդ փափաքը մնաց անկատար:

ՖԻԼՄԱՇԵԱՐԴ

«ՕՍԿԱՐ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆԸ 2023-ԻՆ ՊԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՆԱՅ ՄԱՐՏ ԱՄՍՈՒՆ

Ամերիկեան շարժանկարներու ակադեմիան յայտնած է, որ «Օսքար» հեղինակաւոր մրցանակաբաշխութիւնը 2023-ին տեղի պիտի ունենայ 12 Մարտին, Դոլիուտի «Տոլպի» թատերասրահին մէջ: 95-րդ մրցանակաբաշխութիւնը պիտի հեռարձակուի ABC կայանի ուղիղ սիւնուով:


2022-ին «Օսքար»ի մրցանակաբաշխութեան «Լաւագոյն շարժանկար» մրցոյթին յաղթած էր «Ըո-



տա» (CODA) շարժանկարը: Ան «Օսքար»-ի արժանացած է նաեւ «Երկրորդ կարգի լաւագոյն դերասան» եւ «Բեմագրութեան լաւագոյն տարբերակ» անուանակարգերուն մէջ: «Շան իշխանութիւն»-ը (The Power of the Dog) ֆիլմը, որ ներկայացուած էր 12-րդ անուանակարգին մէջ, ստացած է միայն մէկ մրցանակ «Լաւագոյն բեմադրիչ» մրցանակով: Ամենաշատ «Օսքար»-ի արժանացած ֆիլմը «Տիւն»-ն էր (Dune): Ան մրցանակներ ստացած է «Լաւագոյն էքրանի ազդեցութիւններ», «Լաւագոյն հնչիւնային ձեւաւորում», «Լաւագոյն նկարահանման աշխատանք», «Լաւագոյն բեմադրող նկարչի աշխատանք», «Լաւագոյն մուլթիմետաժ» եւ «Լաւագոյն երաժշտական ձեւաւորում» անուամբ մրցումներուն:

Քանաստեղծին անկիւնը

ԵԿՈՒՐ



Ռուբէն Սեւակ

Եկո՛ւր, եկո՛ւր, ճամբաներէն անուրջիս, Սրտիս ջահերն այրեցի քեզ ի հանդէս, Վերջին անցորդ տառապանքի կամուրջես, Երգի մը պէս, քող մը պէս, մօր մը պէս Եկո՛ւր, եկո՛ւր ճամբաներէն անուրջիս... Եկո՛ւր, ես քուկը եմ, քեզ արթայ՝ ու գերի, Ես, մեղապարտ անօթը սուրբ համբոյրիդ... Դեւքս աղօթքի պէս դեմքիդ շուրջ կ'դեգերի, Պաշտամունքիդ ես խնկանօթ միամիտ: Եկո՛ւր, ես քուկը եմ, քեզ արթայ ու գերի... Զու տաճարիդ ես քուրմ երգիչն եմ դողդոջ. Ու դուռ մարմինն ես անմարմին երգերուս, Խենթեցընող յաւերժահարս բողբոջ, Ցող մահացնող սրտի հազար վերքերուս. Սուրբ տաճարիդ ես քուրմ երգիչն եմ դողդոջ...

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

- Սուրիոյ պասքեթի պատանեկան Ս16-ի հաւաքականը Յորդանանի մէջ իր մասնակցութիւնը բերաւ արեւմտեան Ասիոյ մրցաշարքին, ուր կրեց չորս հերթական պարտութիւն: Սուրիան պարտութեան մատնուեցաւ Իրաքէն 53-34 , Իրանէն 99-50, Լիբանանէն 79-63 եւ Յորդանանէն 50-70 արդիւնքներով:



- Սուրիոյ Ֆութպոլի Դաշնութեան ընտրութիւններէն քանի մը օր առաջ, Թշրին ակումբի նախագահ Թարէք Չէյնի չեղեալ համարեց նախագահի պաշտօնի իր թեկնածութիւնը: Այսպիսով դաշնութեան նախագահութեան մնաց միայն 3 թեկնածու:

- Այս շաբթուան ընթացքին Սուրիա ժամանեցին աւարտական քառեակի մասնակից խումբերու արհեստավարծ խաղացողները: Իթթիհատին մաս պիտի կազմէ մէկ ամերիկացի եւ մէկ արձերացի խաղացող, ճալապին եւ Ուահտէին երկու թունուզցի խաղացողներ, իսկ Քարամէին՝ մէկ ամերիկացի խաղացող:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԼԻՎՐՓՈՒԼ ԱՆԳԼԻՈՅ ԳԱԽԱԹԸ ՆՈՒԱԾԵՑ

Լոնտոնի «Ուեմպլի» մարզադաշտին մէջ տեղի ունեցած աւարտական մրցումին Լիվըրպոլը յաջողեցաւ պարտութեան մատնել մրցակից Չելսին եւ նուաճել Անգլիոյ գաւաթը: Հանդիպումի հիմնական ժամանակաշրջանը աւարտեցաւ 0-0 հաւասարութեամբ, որմէ ետք խումբերը դիմեցին յաւելեալ ժամանակաշրջանի խաղարկութեան, որ դարձեալ վերջ գտաւ նոյն արդիւնքով: Կազմերը տուգանային հարուածներու դիմեցին:

հանդիպումը վերջ գտաւ 5-6 արդիւնքով ի նպաստ Լիվըրպոլին: Նշենք, որ հանդիպումի 33-րդ վայրկեանին Լիվըրպոլի խաղացող Մուհամմետ Սալահ դուրս եկաւ դաշտէն վիրաւոր: Այս 8-րդ անգամն է, որ Լիվըրպոլ կը նուաճէ Անգլիոյ գաւաթը հաւասարելով Չելսիին, որ դարձեալ տիրացած է տոյն բաժակը 8 անգամ:

Յիշեցնենք, որ Չելսի ու Լիվըրպոլ հանդիպած էին նաեւ անգլիական լիկի գաւաթի եզրափակիչ խաղարկութեան, որ դարձեալ աւարտեցաւ տուգանային հարուածներով՝ 10-11 արդիւնքով:

ԻՐԿԵՆ ԿԼՈՓԸ ԿՐԿԵՑ ԱԼԵՔՍ ՖԵՐԻԿԱՆԻ ՆՈՒԱԾՈՒՄԸ

Անգլիոյ գաւաթը նուաճելու շնորհիւ, Լիվըրպոլի գերմանացի գլխաւոր մարզիչ Իրկէն Կլիպ կըրկնեց Մանչեսթըր Իւնայթըտի նախկին գլխաւոր մարզիչ Ալեքս Ֆերիքսընի նուաճումը: Ըստ Opta-ի, 54-ամեայ Իրկէն Կլիպ 80-ամեայ Ալեքս Ֆերիքսընէն ետք երկրորդ մարզիչն է, որ կը յաջողի նուաճել Անգլիոյ ախոյեանի, գաւաթակիրի, անգլիական լիկի գաւաթակիրի եւ Չեմփիընզ լիկի գաւաթակիրի տիտղոսները:



ԽԱԶԲԱՌ (ՄԻ 390)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Հորիզոնական

1. Ռուբէն Տէր Միլասեանի ազգային ազատագրական պայքարի մասին եօթ հատորով գրած յուշերը. « Հայ Մը Յիշատակները »:
2. Գիւղ, Հայաստանի Վայոց ձորի մարզին մէջ գտնուող: Հակառակ՝ իգական անուն: Անձնական դերանուն:
3. Թուանշան մը:
4. Հինգշաբթի: Տառի մը անունը: Ստուով:
5. Տախտակի լայն շերտ: Ցաւի ճիչ: Տառի մը հարեանները:
6. Եական բայ: Սկստական խաղի տեսակ:
7. Ծաղկում: Հաստատական պատասխան: Յոգնակերտ մասնիկ:
8. Կոմիտասի ստեղծագործութիւններէն:
9. Յարաբերական դերանուն: Քէն:
10. « Կեանքը Հին Հռոմէական ճանապարհի Վրայ » վեպի հեղինակին մականունը: Տառի մը անունը:
11. Թատերական գործողութեան բաժանում: Օդ:
12. 202: Արամ Մանուկեանի մասին արտասանած հետեւեալ խօսքի հեղինակին մականունը. « ... Երբ գիշերը գայ, մտնէք ձեր հողու սենեակը, խօսքը ձեր խղճի հետ եւ ասէք արդեօք՝ աշխատել էք հայ ժողովրդի համար այնպէս, ինչպէս Արամը, եղէ՞ք էք այնքան անձնագոհ, որքան Արամը, տուէ՞ք էք ձեր ամբողջ կեանքը հայ ժողովրդին, ինչպէս Արամը... »:

Ուղղահայեաց

1. Սեւեռել: Ճոխ, առատ:
2. Յոգնակերտ մասնիկ: Կայծակ: Ծնողագուրկ:
3. Ծարժուն մեքենայի ուղղութիւն դրոշմող գործիչ: Հայ գուսան:
4. Անձնական դերանուն: Կրկին: Եթէ: Յարաբերական դերանուն:
5. Փայտ ճեղքելու համար սեպ: Հարցական դերանուն:
6. Տարի: Հակառակ՝ գրական ստեղծագործութիւն:
7. Քաջ: Հակառակ՝ տառի մը անունը: Հակառակ՝ խօսք:
8. Հարսին հայրը: Գրաբար՝ ո՞ր: Հակառակ՝ տեսակցութիւն:
9. Ականաւոր: Բայական լծորդութիւն:
10. Կինընուն յատուկ գարդեղէն: Հակառակ՝ յոգնակերտ մասնիկ:
11. Հակառակ՝ Եական բայ: Փոթորկալից:
12. Վաւերագիր: Բարդ:

ԽԱԶԲԱՌ (ՄԻ 389)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Ե	Ի	Կ	Ո	Ղ	Ռ	Ս	Տ	Ս	Լ	Կ	Կ
2	Ա	Ա	Խ	Ա	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե
3	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե
4	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
5	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե
6	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
7	Օ	Տ	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
8	Չ	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
9	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
10	Կ	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
11	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
12	Ե	Ա	Ե	Ա	Ե	Չ	Ս	Ա	Ս	Ե	Ա	Ս

ԼՈՒՐԵՐ

Երկուշաբթի
23/5



16° 26°

Երեքշաբթի
24/5



16° 28°

Չորեքշաբթի
25/5



16° 29°

Հինգշաբթի
26/5



18° 31°

Ուրբաթ
27/5



18° 33°

Շաբաթ
28/5



18° 34°

Կիրակի
29/5



18° 33°

ԱԶԳ. ՄԱՆԿԱԳՐԱՐՏԵՋԻ ՓՈՔՐԻԿ ՇՐՋԱՆԱԿՐՏՆԵՐԸ

Բոլորիս մտքերուն մեջ անջնջելի կը մնան մանկութեան յիշատակները, մանաւանդ մեր առաջին ուսումնական վկայական ստացած օրը՝ մանկապարտեզի ամսվերջի հանդեսին օրը: Այս տարի, Ազգ. Մանկապարտեզի յարկին տակ

րով, քիչ մըն ալ մանկական հաճելի վրիպումներով իրենց ուրախագուարթ աշխարհը բացին մեր դիմաց:

Անոնք ներկայացուցին փունջ մը պարեր, ինչպէս՝ ծաղիկներու պարը, մօր նուիրուած պարը, եւ



երեք տարիներ բոլորելով, աւելի քան 50 փոքրիկներ շրջանաւարտ դարձան եւ մեզի ներկայացուցին երեք տարուան մէջ Ազգ. մանկապարտեզի օգտաշատ ծառէն իրենց քաղած պտուղները:



Հանդեսը տեղի ունեցաւ Կիրակի, 15 Մայիս 2022-ին, Հայլէպի «Գ. Եսայեան» սրահէն ներս: Հանդեսին ներկայ էին Բերիոյ Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Զօպուեանի ներկայացուցիչ՝ Տէր Զարեհ Զահանայ Շաքարեան, Բերիոյ Թեմի Ազգ. Վարչութեան եւ Ուսումնա-



կան հորիւրդի, միութիւններու ներկայացուցիչներ եւ ծնողներ:

Բեմը կը ցուցանէր մանկապարտեզի գունագեղ առօրեան. գոյն-զգոյն մատիտներ, տետրեր, փուչիկներ, խաղալիքներ ու բեմին եզերքը դաշնամուրի ստեղնաշարը պատկերող լայն երիզ մը:

Երբ վարագոյրը բացուեցաւ, փոքրիկներէն խումբ մը բեմին վրայ կը գրուցէր հանդեսին նիւթին մասին. ի՞նչ նիւթ ընտրել, որպէսզի հանդիսատեսը հետաքրքրութեամբ դիտէ, որո՞նց օգնութեան դիմել, ինչպէ՞ս հոգալ հանդեսին ծախսերը եւ այլն: Ապա անոնք դիմեցին իրենց ուսուցչուհիներուն եւ մանապարտեզի պանուհիին ու հանդեսը նուիրուեցաւ ընտանիքի տօնին:

Փոքրիկները իրենց պատրաստած գեղարուեստական յայտագի-

մերթ ընդ մերթ արտասանեցին իրենց դպրոցին, ծնողքին, ընտանիքին ու հայրենիքին նուիրուած խօսքեր: Ապա անոնք երգչախումբ կազմելով երգեցին մանկապատանեկան եւ ազգային երգեր, ինչպէս նաեւ Ազգ. Մանկապարտեզին նուիրուած երգ մը, որուն հեղինակն էր մանկապարտեզի պանուհի Նուշիկ Զաքրեան, երաժշտութիւնը յօրինած էր Լիլի Գեորգեան, երգչախումբին դաշնամուրով կ'ընկերակցէր ուսուցչուհի Փաթիլ Վարդապետեան:



Աւարտին, մանկապարտեզի պանուհին բեմ հրաւիրեց Ազգ. Մանկապարտեզի «Կոկոն» եւ «Ծաղիկ» կարգերու դաստիարակները, որպէսզի ներկայացնեն փոքրիկները եւ պատրաստեն գիրքն վկայականի բաշխման արարողութեան:

Վկայականները յանձնեցին մանկապարտեզի պանուհին եւ Արժ. Տէր Զարեհ Զահանայ Շաքարեանը:

Զահանայ հայրը աւարտին իր եզրափակիչ խօսքով Առաջնորդ Սրբազան Զօրոզոյնները, շնորհաւորութիւններն ու գնահատական խօսքերը փոխանցեց, ապա ըսաւ, որ «Սփիւռքի Տարուան» խճանկարին մէջ շրջանաւարտ այս սերունդը իւրայատուկ տեղ պիտի գրաւէ:

«Այս փոքրիկները ոչ միայն մեզմէ կը սորվին, այլեւ մեզի կը սորվեցնեն հաւատարմութիւն, սէր ու ընկերասիրութիւն», աւելցուց քահանայ հայրը ու մաղթեց, որ անոնք յաջողութեամբ մուտք գործեն նախակրթարան, ետքը Ազգ. Զարեհ Եփփե ճեմարան, որպէսզի հետագային ըլլան յաջող դէմքեր, ծառայեն իրենց ազգին ու համայնքին:

Հանդեսը փակուեցաւ «Պահպանիչ» աղօթքով:

Անի Պողիկեան

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱՉԵԱՆ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՊՐՈՅԸ ԱՄՎԵՐՋԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՄԵՐԳՆԵՐՈՎ ԱՄԲՈՂՁԱՅՈՒՅ 2021-2022 ՏԱՐԵՆԵՐՁԱՆԸ

Հովանաւորութեամբ Համազգայինի Սուրիոյ Շրջ. Վարչութեան, Համազգայինի «Բարսեղ Կանաչեան» Երաժշտական Միաւորի Վարչութիւնը 10 Մայիսէն 13 Մայիս 2022, երեկոյեան ժամը 6:00-ին, կազմակերպեց չորս երաժշտական համերգներ, «Տիգրանեան» պար-

տեզի յանձնախումբին, երաժշտական տնօրէնուհիին, ուսուցչական կազմին եւ վերջապէս աշակերտներու ծնողներուն, որոնք իրենց գաւակները կը վստահին Համազգայինին:

Համերգներու հանդիսավարութիւնը յաջորդաբար կատարեցին



տեզի «Սահակ Նալպանտեան» սրահէն ներս, ամբողջացնելով 2021-2022 ուսումնական տարեշրջանը:

Համերգներուն ներկայ գտնուեցան Համազգայինի Սուրիոյ Շրջ. Վարչութեան ներկայացուցիչ ընկի.

երաժշտական ուսուցչուհիներ Փաթիլ Զէչեճեան, Տեսիլ Սարեան եւ Անի Պողիկեան:

Ելոյթ ունեցան երաժշտական գործիքներու եւ ձայնամարդութեան աշակերտները, որոնք հայկական եւ միջազգային երաժշտական ստեղ-



ծուշիկ Ղազարեան, Շրջ. Վարչութեան անդամներ, երաժշտական ուսուցչուհիներ, աշակերտներու ծնողներ ու հարազատներ:

Իւրաքանչիւր համերգի բացումը կատարուեցաւ վարչութեան ատենապետ Շողեր Մուշեղեան-

ծագործութիւններու ընտրանի մը ներկայացուցին հանդիսատեսներուն:

Ձայնամարդութեան աշակերտներու մեներգներուն դաշնամուրով կ'ընկերակցէր ձայնամարդութեան վաստակաւոր ուսուցչուհի Գայիանէ Սիմոնեան-Տերեան,



Հայրապետեանի եւ յաջորդաբար վարչականներու բացման խօսքերով, ուր լուսարձակի տակ առնուեցաւ երաժշտական արաքելութիւնը եւ շնորհակալական խօսք ուղղուեցաւ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօպուեանին՝ իր հայրական հոգածութեան համար, ինչպէս նաեւ Համազգայինի Սուրիոյ Շրջ. Վարչութեան, որ շարունակ գօրավիզ կը կանգնի երաժշտական գործունեութեան, ապա նաեւ Ազգ. Միացեալ Նախակրթարանի հոգաբարձութեան, «Տիգրանեան» պար-

կարգ մը մենակատարներու ալ՝ Յովիկ Օհանեան:

Յատկանշական էին ջութակի եւ կիթառի անսամպլները, որոնք իւրայատուկ երանգ տալով համերգներուն, զարգացուցին պատանիներուն կատարողական կարելիութիւնները:

Համերգները փակուեցան երաժշտական տնօրէնուհի Անժելա Սեմերճեան-Յակոբեանի քաջալերական խօսքով, որմէ ետք աշակերտները ստացան իրենց վիճակացոյցները:

Թողակից